ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> 06 2013թ. N: 145-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ, 1.23-րդ կետերի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման>> կարգի 5-րդ, 7-րդ կետերի դրույթների, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի հուլիսի 24–ից 25-ը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում >> թեմայով:

2. Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծել՝

1) ուսումնավարժության ղեկավարման խումբ՝ /հավելված թիվ 1/.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝/հավելված թիվ 2/.

3) ուսումնավարժության միջնորդական խումբ՝ / հավելված թիվ 3/:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանման հանձնաժողովը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հետևյալ վարչությունները.

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, վարչության պետ Հ. Հովհաննիսյան,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը, վարչության պետ Լ. Մարտիրոսյան,

գ.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը, վարչության պետ Ա. Մարգարյան,

դ.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը, վարչության պետ Մ. Մանուկյան,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչությունը, վարչության պետ Ս. Մինասյան.

4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը, վարչության պետ Կ. Բաբակեխյան.

5) Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից <<Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սեպասարի համայնքում ձևավորված համայնքային փրկարարական թիմը.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հետևյալ համայնքները

ա. Աշոցքի համայնքը, համայնքի ղեկավար Ա. Ալոյան,

բ. Զույգաղբյուրի համայնքը, համայնքի ղեկավար Գ. Սուքիասյան.

7) Կազմակերպություններ՝

ա. <<Աշոցքի ավտոտրանսպորտ և ճանապարհներ>> փակ բաժնետիրական ընկերությունը, տնօրեն Մ.Կարապետյանին

բ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Շիրակի մարզային կենտրոնը, տնօրեն Կ. Թայիրյան,

գ. <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությունը, ընկերության միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ Վ. Մարտիրոսյան,

դ. <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Ղարս>> մասնաճյուղը, տնօրեն Գ. Ֆարզադյան,

ե. <<ԱրմենՏել>> փակ բաժնետիրական ընկերության արևմտյան տարածքային կենտրոնը, տնօրեն Հ. Նալբանդյան,

զ. <<Հայռուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը, տնօրեն Ս. Ամիրբեկյան,

է. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության <<Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, տնօրեն Ս. Նազարեթյան:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Մ. Սարիբեկյանին՝

1) մինչև 2013 թվականի հունիսի 28-ը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումանավարժության նախապատրաստման պլանը և ապահովել պլանով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

2) 2013թվականի հուլիսի 12-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

5. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների>> պլանով նախատեսված միջոցառումների և փոխգործողությունների պլանները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով և հանդերձանքով,

2) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

6. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 10 Ի ԹԻՎ 145-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24 ԻՑ 25-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Ֆ. Ցոլակյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար,

Ս. Պետրոսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ,

Հ. Արշակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ՝ ուսումնավարժության ղեկավարի օգնական:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 10 -Ի ԹԻՎ 1454-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-ԻՑ 25-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Մ. Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ՝, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ,

Մ Մկոյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ - վարչության պետի տեղակալ, ուսումնավարժության խաղարկման խմբի ղեկավար,

Ռ. Հարությունյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, ուսումնավարժության խաղարկման խմբի անդամ,

Կ. Եղշատյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ապահովման հարցերով պետի տեղակալ, ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար,

Ռ. Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Աշոցքի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, ուսումնավարժության գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ,

Հ. Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, ուսումնավարժության վերլուծման և ամփոփման խմբի ղեկավար,

Է. Սարոյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, ուսումնավարժության վերլուծման և ամփոփման խմբի անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 10 Ի ԹԻՎ 1454-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-ԻՑ 25-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԾՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Մ. Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, խմբի ղեկավար,

Լ. Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ բնակչության պաշտպանության բաժնի պետ,

Ս. Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ,

Յու. Հակոբյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,

Է. Ներսիսյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ